Մրցույթ՝ Երևանի «Ներսես Մեծի անվան թիվ 124 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի երաժշտության (11 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում /Ձև 1/ , մեկ լուսանկար 3Х4 չափսի,

2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4)«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկան աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝առկայության դեպքում,

5) ինքնակենսագրություն /ձև 5/,

6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի փետրվարի 16-ից մինչև մարտի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թվականի մարտի 7-ին՝ ժամը 14:00-ին**, Երևանի Ներսես Մեծի անվան թիվ 124 հիմնական դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 010 62-50-90 :